

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ 2011թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիր»-ը ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդի կողմից 2011թ. փետրվարի 11-ին և հաստատվել ՎՊՄԻ խորհրդի 06.05.2011թ. նիստի որոշմամբ:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը (ընդունված ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշմամբ) և ՀՀ ԿԳ նախարարի 30.12. 2010թ. հ.1806-Ա/Ք հրամանով հաստատված «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը»:

Ինստիտուտում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների ընդունված ծրագրի իրականացման գործընթացում առաջնորդվում ենք ԿԳ նախարարության կողմից մշակված, հաստատված և բուհեր ուղարկված՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված նորմատիվային կարգերով, որոնց դրույթներին և պահանջներին համապատասխան վերանայվում և բարելավվում են ինստիտուտի ներքին իրավական ակտերը:

Բուհի ղեկավարությունը և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներից մասնակցել են ԿԳ նախարարության կողմից կազմակերպված սեմինարներին ու խորհրդակցություններին, աշխատակիցների շրջանում իրականացրել դրանց որոշումների ու պահանջների մասին իրազեկման և բացատրական աշխատանքներ:

Ընդունված ծրագրի ակնկալվող արդյունքներին հասնելու համար 2011 թվականին ինստիտուտում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Բուհի աշխատակիցների և ուսանողների շրջանում կոռուպցիոն երևույթների ընկալման, հակակոռուպցիոն միջոցառումների իմացության և համապատասխան պատասխանատվության մասին օրենքների հստակ գիտակցման ու անթերի իրականացման նպատակով անցկացվել են շրջանառության մեջ գտնվող հակակոռուպցիոն օրենքների, իրավական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ ԿԳ նախարարի հրամանների, կարգադրությունների ու որոշումների ներկայացման և իրազեկման աշխատանքներ պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների, իրավագիտական առարկաներ դասավանդող դասախոսների կողմից:

Դեկտեմբերի առաջին կեսին (քննաշրջանից առաջ) մեկ անգամ ևս անցկացվել են ֆակուլտետների գիտաուսումնամեթոդական խորհուրդների և ամբիոնների հատուկ

նիստեր՝ նվիրված հակակոռուպցիոն միջոցառումներին և կոռուպցիոն երևույթների համար պատասխանատվությանը:

2. Ուսանողության հետ հետադարձ կապի ապահովման, ուսանողության կողմից հակակոռուպցիոն գործողությունների մշակման և ձեռնարկման նպատակով ռեկտորի և դեկանների կողմից պարբերաբար իրականացվել են ուսանողության հետ հանդիպումներ, հակակոռուպցիոն թեմաներով զրույցներ:
3. Կրթության որակի բարձրացման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ու վերացման ակնկալիքով վերանայվել են գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի որոշ դրույթներ:
4. Գիտխորհրդի կողմից ընդունվել և հաստատվել են «Ռեֆերատների պատրաստման, ձևակերպման, ներկայացման և գնահատման մեթոդական ուղեցույցը», «Համակարգչային թեստավորմամբ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգը», «Բակալավրիատի ուսանողների կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգը», «ՎՊՄԻ մագիստրոսական ծրագրի ղեկավարի գործնեության կանոնակարգը», վերանայվել են «Ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգը», «ՎՊՄԻ շրջանավարտի ամփոփիչ ավարտական պետական որակավորման կանոնակարգը», «Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի լավագույն ուսանող և «Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի լավագույն կուրս» ընտրելու համար մրցանակաբաշխության կանոնակարգը» և այլն:
5. Կատարելագործվում են ուսանողների հետ տարվող ինքնուրույն և անհատական պարապմունքների ձևերը և դրանց հաշվառման մեխանիզմները գիտելիքների գնահատման գործընթացում (կազմվել են «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և արդյունքների գնահատման մեթոդական ուղեցույցը», «Հեռակա բաժնի ուսանողների ստուգողական աշխատանքների կազմակերպման, կատարման, ներկայացման և գնահատման կարգը», որոնք գտնվում են քննարկման փուլում և կընդունվեն գիտխորհրդի առաջիկա նիստերից մեկում):
6. Կատարելագործվել է գիտելիքների համակարգչայնացված ստուգման համակարգչի ծրագրային ապահովումը: Ծրագիրը ոչ միայն տրված թեստային հարցերի բանկից յուրաքանչյուր ուսանողին տրամադրում է անհատական առաջադրանք և կատարում գնահատում, այլև կարող է օգտագործվել նաև ուսուցողական նպատակով՝ օգնելու ուսանողներին համակարգչային ստուգման նախապատրաստելու համար:
Արդեն երկու տարի է՝ համաինստիտուտային բոլոր առարկաների գիտելիքների ստուգումն անցկացվում է նման ձևով:
7. Ամբիոններում իրականացվում են դասավանդվող մասնագիտական առարկաների թեստավորման աշխատանքներ, և նախատեսվում է հնարավորության դեպքում

ամառային քննաշրջանում համակարգչային ստուգումներ իրականացնել նաև մի շարք մասնագիտական առարկաներից: Գնահատման բազմագործոնային համակարգի հետ իրականացվող գիտելիքների համակարգչայնացված ստուգման համակարգի ներդրումը նպաստելու է ստուգարքի և քննության միջև տարբերակման վերացմանը:

8. Որոշակի միջոցառումներ են իրականացվել ակադեմիական խորհրդատուների դերի և պատասխանատվության բարձրացման, ուսխորհրդի և ուսանողների դերի ակտիվացման, քննաշրջանի գործընթացների թափանցիկության ապահովման համար: Այդ նպատակով որոշ ամբիոններում (Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի, Փիլիսոփայության և քաղաքագիտության, Ֆիզիկայի) ակադեմիական խորհրդատուները, մագիստրատուրայի և բակալավրատի բարձր առաջադիմությամբ ուսանողները մասնակցում են ընթացիկ քննությունների գրավոր աշխատանքների ստուգմանը և գնահատմանը:
9. Ընդունելության գործընթացների թափանցիկության ապահովման նպատակով մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է՝ ըստ ուսանողներին ի տես ներկայացվող առաջադիմության տվյալների, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելությունն այս տարի իրականացվել է առանց ընդունելության քննությունների՝ դիմորդների ավարտական փաստաթղթի գնահատականների հիման վրա՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. մարտի 24-ի թիվ 237-Ն հրամանի:
10. Նախատեսվում է բոլոր տիպի ստուգումների արդյունքների տեղադրում բուհի կայքում:
11. «Բարձրագույն և հետբուհական հաստատությունների կառավարման գործունեության և թափանցիկության և հաշվետվողականության համակարգի կատարելագործում» ծրագրի շրջանակում ՎՊՄԻ-ում մշակվել և ներդրվել է կառավարման համակարգի հորիզոնական մոդել, որն ուղղված է կրթական գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը: Այն իր բնույթով ժողովրդավարական է, որում բուհի ղեկավարումը ուղղահայաց է, իսկ կառավարումը՝ հորիզոնական-գործընթացային: Կառավարման համակարգի նմանատիպ կազմակերպումը հակակոռուպցիոն ռիսկերի նվազեցման երաշխիքներից է:
12. Ինստիտուտում կոռուպցիոն ռիսկերը կանխելու ուղղությամբ կատարվել են նաև այնպիսի ձեռնարկումներ, որոնք հանրապետության բուհերում աննախադեպ են.
 - դասախոսական տեքստերի էլեկտրոնային գրադարանի ստեղծումը և յուրաքանչյուր ուսանողին առանձին կուրսի գրադարանը պնակիտով տրամադրելը, որն արդեն գործում է 3 տարի և նպաստում է կրթության որակի բարձրացմանն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,
 - ուսումնական պլաններում «Հատուկ դասընթաց մասնագիտական առարկայից» և «Հատուկ դասընթաց մանկավարժությունից» առարկաների տեղակայումը ավարտական կուրսերի համար, որոնք նպաստում են ավարտական քննություններին

նախապատրաստվելուն, ելքի արդյունքների բարձրացմանը և կոռուպցիոն ռիսկերի վերացմանը (այն արդեն 4 տարվա պատմություն ունի):

Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի իրականացված միջոցառումներում կան նաև որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ թերացումներ: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Առաջնահերթ վերանայվել են (կամ կազմվել են նորերը) ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող կարգերն ու մեթոդական ուղեցույցները:
Սակայն դեռևս կան տարիների ընթացքում ընդունված որոշ ներքին իրավական ակտեր և ընթացակարգեր, որոնք պետք է համապատասխանեցվեն ՀՀ ԿԳ նախարարի հրամաններին կամ բարելավման կարիք ունեն` գործնելության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, կամ հակակոռուպցիոն միջոցառումներին համապատասխանեցման տեսանկյունից:
2. Թերի է քննաշրջանի վերահսկման ընթացքին ուսանողների մասնակցությունը, ինչը որոշակի չափով ունի օբյեկտիվ բնույթ, քանի որ ուսխորհրդի կողմից այդ գործընթացում ընդգրկված առաջադեմ և ակտիվ ուսանողները նշված շրջանում ավելի շատ զբաղված են լինում իրենց քննություններին պատրաստվելու և հանձնելու հոգսերով:
3. Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագրի ընդունումից հետո ուսխորհրդի, դեկանատների, ուսումնական վարչության կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և կրթության որակի բարձրացման նպատակով սոցիալացումներ չեն կազմակերպվել, ինչը պետք է նշել որպես էական թերացում:
4. Հաշվետու շրջանում թերի են օգտագործվել նաև զանգվածային լրատվական միջոցները, որոնց միջոցով իրականացվող հարցազրույցները, քննարկումները, շահառուներին իրազեկումները ապահովում են իրականացվող գործընթացների թափանցիկությունը և նպաստում կրթության որակի բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ու կանխմանը և բուհի վարկանիշի բարձրացմանը:

Առաջիկա տարվա ընթացքում ինստիտուտում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի աշխատանքները իրականացվելու են` ընդունված համալիր ծրագրին համապատասխան: Հատուկ ուշադրություն է դարձվելու վերհանված թերացումները և բացթողումները վերացնելու աշխատանքներին, ինչպես նաև իրականացված միջոցառումների արդյունքների ամրապնդմանը և անվերադարձ ներդրմանը` որպես գործունեության նորմերի:

Հաշվետվության մեջ ներկայացված և իրականացված միջոցառումները դեռևս չեն ապահովում կոռուպցիոն երևույթների կամ ռիսկերի բացառումը: Ուստի այդ աշխատանքները պետք է լինեն շարունակական և իրականացվեն այնքան ժամանակ,

մինչև որ հասարակությունը (և նրա մասը կազմող ուսանողությունն ու կրթության ոլորտի աշխատողները) կոռուպցիոն երևույթները և դրանց դրսևորումներն ընկալի և գնահատի որպես պետական և հասարակական չարիք: